

## **ՉՈՒՏ ԱՐԵՒԱՅԻՆ ՕՐԱՅՈՒՅՑ**

### **ՕՐԱՅՈՒՅՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ**

Չազարամյակների ընթացքում տարբեր երկրներում ստեղծվել եւ կիրառվել են բազմաթիվ օրացուցային համակարգեր: Դա հետեւանք է այն բանի, որ լուսատուների եւ երկրի շարժմամբ պայմանավորված բնական պարբերական ժամանակահատվածների տեւողությունները (արեգակնային օրը (24 ժամ), սինոդական ամիսը (29 օր 12 ժամ 44 րոպե 3 վրկ.) եւ արեւադարձային տարին (365 օր 5 ժամ 48 րոպե 46 վրկ.) անհամասնական են: Այսինքն, անհնար է գտնել այնպիսի ամբողջ թվով արտահայտվող տարիների քանակ, որը պարունակի ամբողջ թվով ամիսներ կամ օրեր:

Չնայած բազմազանությանը, բոլոր օրացուցային համակարգերը երեք տիպի են. լուսնային, արեգակնային եւ լուսնա-արեգակնային: Բնական պարբերաշրջանները՝ օրվա ժամերի, տարվա եղանակների փոփոխությունը, ժամանակի հոգեբանական ընկալումը, կապված են արեւի հետ: Ուստի միայն արեւային օրացույցը կարող է բավարարել մարդուն: Եւ հակառակը, լուսնային եւ լուսնաարեգակնային օրացույցների գոյությունը պայմանավորված է միայն առանձին ազգերի (հիմնականում՝ սեմական) կրոնական պատկերացումներով:

### **Գրիգորյան օրացույցն ու նրա թերությունները**

Այսօր գրեթե ամբողջ աշխարհում պաշտոնապես ընդունված Գրիգորյան օրացույցը նույնպես արեւային է: Սակայն այն ունի լուրջ թերություններ. ամիսների անհավասար տեւողությունները (28, 29, 30, 31 օր), եռամսյակների անհավասարությունը (90, 91, 92 օր) եւ այլն, եւ ամենակարեւորը՝ շաբաթվա օրերի եւ ամսաթվերի անհամաձայնեցվածությունը, որը լուսնային օրացույցի մնացորդային ազդեցության հետեւանք է, եւ պայմանավորված է, մասնավորապես, այն բանով, որ շաբաթը յոթնօրյա է: Ընդունելով յոթնօրյա շաբաթը մերձավոր արեւելքի ազգերը, ելնելով իրենց կրոնական պատկերացումներից, այդ թվում, հաշվի առնելով «7» թվի խորհրդապաշտական իմաստը, փորձել էին օրացույցը համապատասխանեցնել լուսնի փուլերին: Սակայն չորս յոթօրյակներից կազմված ամիսն ունի 28 օր, մինչդեռ սինոդական ամիսը մեկ եւ կես օրով երկար է: Արդյունքում, շաբաթները գրեթե երբեք չեն համընկնում լուսնի փուլերին: Այսպիսով, յոթնօրյա շաբաթի կիրառումը չի բավարարում նույնիսկ այն ինդրի պայմաններին, որի լուծմանը կոչված էր (չհաշված հարցի միստիկական կողմը): Սակայն, սովորության ուժն այնքան մեծ է, որ մեր օրերում, երբ նախագծում են նշված թերություններից գերծ, համաշխարհային օրացույց, որն, ինչպես ենթադրվում է, պիտի ընդունեն բոլոր երկրները, յոթօրյա շաբաթը պահպանում են: Օրինակ, առաջարկվում է օրացուցային տարվա տեւողությունն ընդունել 364 օր (91 օր եւ 13 ամբողջական յոթօրյա շաբաթ պարունակող 4 եռամսյակ): Արեւադարձային տարվա հետ համաձայնեցնելու համար տարվա վերջում ավելացվում է մեկ արտաշաբաթյա օր («խաղաղության օր») եւ 4 տարի մեկ, հունիսի 30-ից հետո, եւս մեկ արտաշաբաթյա օր՝ «նահանջ տարվա օր»: Ինչպես երեւում է, ամիսները կրկին ունենում են անհավասար տեւողություն (յոթօրյա շաբաթը պահպանելու դեպքում, եթե դրանից բացի ցանկություն կա պահպանել տարվա բաժանումը չորս եղանակների, այլ կերպ չի էլ կարող լինել) եւ դեռ խախտվում է ավանդական օրացույցի շաբաթվա օրերի անընդհատ շարքը): Մինչդեռ պարզ է, որ օրացույցը կատարելագործելու համար պետք է հրաժարվել 7-օրյա շաբաթից (ինչպես դա արվել էր ֆրանսիական այն օրացույցում, որը շուրջ 12 տարի գործածության մեջ էր ֆրանսիական մեծ հեղափոխության

տարիներին): Այսպիսով, յոթօրյա շաբաթվա օգտին խոսում է միայն 2 հազարամյա ավանդույթի ուժը, որն, ինչ խոսք, լուրջ փաստարկ է՝ ավանդույթները պետք է հարգել: Սակայն բանն այն է, որ հին հայկական արեւային օրացույցի գործածության ավանդույթը երկու անգամ ավելին է:

### **Հայկական օրացույցը**

Հայկական օրացույցային տարին կազմված է եղել 12 30-օրյա ամիսներից եւ 5-օրյա լրացուցիչ ամսից: Ամիսները կրել են աստվածների եւ այլ անուններ: Հատուկ անուններ են ունեցել նաեւ օրվա 24 ժամերը: Այս օրացույցը պատկանում է հին արեւային օրացույցների շարքին, որոնք սկիզբ են առնում, հավանաբար, հին եգիպտական օրացույցից: Ավանդապես համարվում է, որ դրա կիրառությունը սահմանել է Հայկը, Բելին հաղթելուց հետո: Ամենասկզբում, երբ արեւային տարվա տեւողությունը ճիշտ չէր հաշված եւ համարվում էր 365 օր, քառորդ օրվա տարբերության հաշվին օրացույցային տարին արեւադարձային տարուց ամեն չորս տարի մեկ օրով առաջ էր ընկնում: Որպես հետեւանք, տարվա սկիզբը շրջում էր արեւադարձային տարվա բոլոր օրերով եւ կարող էր լինել տարվա ցանկացած եղանակին: 1460 (365× 4) օր հետո շրջանը (որ կոչվում էր Հայկյա շրջան) փակվում էր. տարվա սկիզբը վերադառնում էր սկզբնական կետին, որն, ինչպես ենթադրվում է, սկզբնապես գիշերահավասարի կետն էր: Հայկյա երկրորդ շրջանը վերջացել է մ. թ. 428-ին, երբ նավասարդի 1-ը համընկել է օգոստոսի 11-ի հետ: Այսպիսով, Հայկյա առաջին շրջանի սկիզբն եղել է մ. թ. ա. 2492 թվին:

Հետագայում հայկական օրացույցն անընդհատ բարելավվել է հայ տոմարագետների (Յովհաննես Սարկավազի, Ազարիա Ջուղայեցու, Վարդան Կարբեցու եւ այլոց) ջանքերով: ԺԱ դարում Յովհաննես Սարկավազ Իմաստասերը կազմում է, այսպես կոչված, Հայոց անշարժ տոմարը: Նմանեցնելով հին օրացույցին նա տավա սկիզբը տեղադրում է օգոստոսի 11-ի վրա: 4 տարուց մեկը համարվել է նահանջ (ավելյաց ամիսն այդ տարի 5-ի փոխարեն 6 օր է ունեցել): 1616-ից հետո Ազարիա Ջուղայեցին տարվա սկիզբը տեղափոխեց գարնանային գիշերահավասարի օրը, իսկ նահանջ տարվա դեպքում լրացուցիչ օրն ավելացվում էր 12-րդ ամսվան: Հետագայում առաջարկվել են հայկական բազմաթիվ օրացույցային համակարգեր: Մասնավորապես, Սիմեոն Երեւանցին 1759-ին կազմած օրացույցով տարվա սկիզբը տեղափոխել էր հունվարի 6-ի վրա (Քրիստոսի ծննդյան օրը) եւ երկրորդ՝ Յոնի ամիսը նահանջ տարիներին պարունակում էր 31 օր: 1870-ին Նահապետ Ռուսինյանը փորձ էր արել փոխել ամսանունները, որպեսզի դրանք կապված լինեին տարվա եղանակների եւ գյուղատնտեսական աշխատանքների հետ (սառներ, մրրկեր, վարդին, ծաղկին, մարգին, հնձար, տոթար, մրգար, կթոն, թառմոն, միզոն, ձյուններ: Փաստորեն դա արվել էր ֆրանսական հեղափոխական օրացույցի օրինակով: Այսպես, ընդօրինակվել էր նաեւ տարվա նույն եղանակի ամիսները նույն վերջավորությամբ ավարտելը. -եր՝ ձմռան ամիսները, -ին՝ գարնան, -ար՝ ամռան, -ոն՝ աշնան:

*Գրիգորյան օրացույցին Հայաստանն անցավ միայն 1920-ից՝ կոմունիստական հեղաշրջումից հետո:* Մինչ այդ, դարեր շարունակ, դրսի եւ ներսի ուժերը փրձել են վերացնել հայկական օրացույցը, բայց՝ ապարդյուն: Միայն մեկ անգամ, մ. թ. 122 թվին հարկադրաբար ընդունվել է Յուլյան տոմարը: 1317-ին Ադանայի եկեղեցական ժողովն է որոշել անցնել Յուլյան տոմարի, բայց որոշումը չի իրագործվել: 1584-ին Յոնի պապի կարգադրությամբ հայերեն թարգմանվեց գրիգորյան տոմարը պարզաբանող աշխատությունը: Բայց դա էլ ադյունք չտվեց: *Հայկական օրացույցի նման անսասանության պատճառը նրա առավելություններն էին գրիգորյան օրացույցի նկատմամբ:* Եւ եթե չլինել հոկտեմբերյան հեղաշրջումը, գուցե մինչեւ այսօր Հայաստանի պաշտոնական օրացույցը ավանդական հայկական օրացույցը կլիներ, ինչպես այժմ պաշտոնական են ազգային օրա-

ցույցները Հնդկաստանում, Իրանում, արաբական երկրներում, Իսրայելում, Եթովպիայում եւ այլ երկրներում: Այս երկրներում գրիգորյան օրացույցը օգտագործվում է պաշտոնական օրացույցին զուգահեռ, բայց առաջնությունը՝ ազգային օրացույցինն է (ճիշտ այնպես, ինչպես որեւէ երկրի պետական լեզուն ազգայինն է, բայց զուգահեռ կարող են գործել մեկ կամ մի քանի միջազգային լեզուներ):

Սակայն լավ է ուշ, քան երբեք: Այսպես, Հնդկաստանում պաշտոնական, ազգային օրացույցը վերականգնվել է ընդամենը 1957 թվականին: Ժամանակակից հնդկական օրացույցում 1916 թ. մոտավորապես համապատասխանում է գրիգորյան օրացույցի 1994-95 թթ., տարվա սկիզբը գարնան գիշերահավասարն է (մարտի 21-ը կամ 22-ը): Գիշերահավասարից է սկսվում նաեւ եթովպական պաշտոնական օրացույցը, իսկ ամիսները պարունակում են 30-ական օր: Իսկ, օրինակ, Իսրայելում ընդունված պաշտոնական օրացույցը լուսնա-արեգակնային է: Ըստ այս օրացույցի տարվա սկիզբը տարբեր տարիներ սկսվում է սեպտեմբերի 5-ից հոկտեմբերի 5-ն ընկած օրերին: Այսպես, 1970 թվականի հոկտեմբերի 1-ը համապատասխանում էր հրեական 5731 թվականի սկզբին, հաշված «աշխարհի արարման» օրից, իսկ հաջորդ, 5732 թվականն սկսվել էր արդեն 1971 թ. սպտեմբերի 20-ին: Ըստ այս օրացույցի 19 արեւային տարիները հավասար են 235 լուսնային ամիսների (1,5 ժամ ճշտությամբ): Յուրաքանչյուր 19 տարիների ընթացքում հաշվում են 12 տարի, 12 լուսնային (29-30 օրյա) ամիսներից բաղկացած, եւ 7 տարի՝ 13 լուսնային ամիսներից բաղկացած: Լրացուցիչ ամիսները ավելացվում են 19-ամյա շրջանի 3, 6, 8, 11, 14, 17 եւ 19-րդ տարիներին: *Իր անհարմարությամ աներեւակայելի այս օրացույցն զարգացած Իսրայելում ընդունվել է ելնելով սոսկ ավանդության պահպանման եւ ազգային-կրոնական նկատառումներից, ազգային նկարագիրը պահպանելու նպատակով:* Մինչդեռ հայկական ավանդական օրացույցը աշխարհի լավագույն օրացույցների թվին է պատկանում:

Բայց չկա չարիք առանց բարիքի: Եւ այսօր, երբ մենք վերականգնել ենք մեր պետականությունը հնարավորություն եւ ժամանակ ունենք էլ ավելի կատարելագործել մեր օրացույցը, օգտվելով ժամանակակից գիտության տվյալներից: Ահա այսպիսի մի օրացույցի նախագիծ է առաջարկվում ստորեւ:

Ընդգծենք միայն, որ խոսքը վերաբերում է օրացույցի ընդհանուր սկզբունքին: Վերջնական օրացույցը կարող է նախագծվել միայն աստղագիտական եւ այլ ճշգրիտ մասնագիտական հաշվարկների հիման վրա:

## **ՉՈՒՏ ԱՐԵՎԱՅԻՆ ՕՐԱՅՈՒՅՑ**

Օրացույցը կազմելիս փորձ է արվել օգտագործել տարբեր ազգերի օրացույցների ու, նախ եւ առաջ, հին հայկական արեւային օրացույցի դրական կողմերը, հատկապես նրանք, որոնք ավանդապես պահպանվել են մինչեւ մեր օրերը:

**Ա.** Որպես օրացուցային դարաշրջանի սկիզբ ընդունված է հին հայկական օրացույցի առաջին Հայկյա շրջանի սկիզբը, այսինքն գրիգորյան Նոր թվականությունից առաջ 2492 թվականը: Այս թիվը մինչեւ այսօր պաշտոնապես ընդունում է հայ քրիստոնեական եկեղեցին եւ անվանում **Բուն հայոց թվական**: Այսպես, գրիգորյան 2007-2008 թվականը համապատասխանում է Բուն հայոց 4500 թվականին:

**Բ.** Տարին սկսվում է գարնանային գիշերահավասարի պահին, այսինքն գրիգորյան օրացույցի մարտի 21-ին կամ 22-ին:

**Գ.** Նահանջ տարիներ են համարվում այն տարիները, որոնց հերթական թիվը անմնացորդ բաժանվում է չորսի, բացառությամբ ամբողջ թվով հարյուրամյակ (երկու զրո) պարունակող այն թվերի, որոնց հարյուրամյակների քանակն անմնացորդ չի բաժանվում չորսի:

Դ. Տարին կազմված է 12 30-օրյա եւ մեկ լրացուցիչ 5-օրյա ամիսներից: Նահանջ տարիներին լրացուցիչ ամիսը պարունակում է 6 օր:

Ե. Ի տարբերություն համանման օրացույցներից, **լրացուցիչ 5-օրյա ամիսը տեղադրված է ոչ թե տարեվերջում այլ տարեսկզբում:** Սա օրացույցի հիմնական առանձնահատկությունն է եւ մի շարք առավելություններ է տալիս սովորական արեւային օրացույցների համեմատ: Մասնավորապես, քանի որ աստղային գարուն-ամառ կիսամյակը (186.4 օր) մոտ յոթ ու կես օրով երկար է աշուն-ձմեռ կիսամյակից (178.8 օր), սա հնարավորություն է տալիս օրացուցային կիսամյակներն ու եռամսյակները մեծ ճշտությամբ համապատասխանեցնել տարվա բնական հանգուցակետերին եւ եղանակներին: Շեղումը հավասար է գրոյի՝ գարնանային գիշերահավասարի պահին (ըստ սահմանման), 2.2 օր՝ ամառային արեւադարձի պահին, 1.4 օր՝ աշնանային գիշերահավասարի պահին, եւ 1.0 օր՝ ձմեռային արեւադարձի պահին: Հակառակ դեպքում շեղումները կկազմեին 0, 2.8, 6.4, 6.2 օր համապատասխանաբար (գրիգորյան օրացույցում այդ շեղումները անչափ մեծ են եւ կազմում են, մոտավորապես, 21, 22, 23, 22 օր համապատասխանաբար): Նույն կարգի ճշտությամբ օրացուցային ամիսներն այս դեպքում համընկնում են կենդանակերպի ավանդական բաժանման հետ:

2. Պահպանված են ամիսների ավանդական անվանումները (չնայած որ չի կարելի բացառել նաեւ Նահապետ Ռուսինյանի առաջարկը, հատկապես որ տարվա ամիսներն ըստ գյուղատնտեսական եւ օդերեւույթաբանական հատկությունների անվանելը տարածված է ամենատարբեր ազգերի մեջ, ու, նաեւ մեր ավանդական ամսանուններն, ի վերջո, նման ծագում ունեն, պարզապես, որպես կանոն՝ ոչ հայերեն: Օրինակ, Մարգաց, Նշանակում է թրչունների թուխսի ժամանակը:

Լրացուցիչ ամսվա տեղադրումը տարեսկզբում հնարավորություն է տալիս լուծել եւս մի խնդիր, կապված ամիսների անունների հետ: Սկսած Հովհաննես Սարկավազի անշարժ տոմարից սովորական է դարձել, որ տարվա առաջին ամիսը՝ Նավասարդը (որ պարսկերեն նշանակում է հենց Նոր տարի) սկսվում է օգոստոսին, այսինքն տարվա շոգ ժամանակ: Այս ամսվա նախօրյակին կազմակերպվում էին հանդիսություններ, այսպես կոչված Նավասարդյան խաղեր, որոնց ավանդույթը կենդանի է դեռ այսօր: Այսպիսով, եթե պահպանում ենք ավանդական (թեեւ իրանական փոխառություն հանդիսացող) ամսանունները, Նավասարդ ամսվա տեղը չի կարող փոխվել: Սակայն, շնորհիվ լրացուցիչ ամսվա Նոր տեղադրության խնդիրը լուծվում է: Լրացուցիչ հնգօրյա ամիսը ստանում է **Ամանոր** հայերեն անվանումը, եւ այսպիսով տարին կրկին սկսվում է «Նոր տարի» կոչվող ամսից:

Ե. Ամսվա օրերը պահպանում են ավանդական անունները. (տես աղյուսակը): Որպես Ամանոր ամսվա օրերի անուններ, ընդունվում են հին հայկական օրացույցի Ավելյաց կոչվող լրացուցիչ ամսվա օրերի անունները. **1. Լուծ, 2. Եղջերու, 3. Փառազևտ, 4. Արտախույր, 5. Ծկրավորի:** Նահանջ տարիներին Ամանորին ավելացվող լրացուցիչ օրը կոչվում է **Ավելյաց:**

Ը. Յուրաքանչյուր ամիս բաժանվում է 3 *տասակի* (տասնօրյակի): Տարին պարունակում է 36 տասակ: Տասակի օրերի հերթական համարը համընկնում է համապատասխան ամսաթվի միավորների թվին: Այսպես, յուրաքանչյուր ամսվա 1-ը, 11-ը, 21-ը համապատասխան տասակի առաջին օրերն են, 2-ը, 12-ը, 22-ը՝ երկրորդ օրերն են եւ այլն: Հետեւապես տասակի օրերն իմաստ չունի անվանել ըստ իրենց հերթական տեղի: Սակայն տասակի յուրաքանչյուր օրվան համապատասխանեցված են Արեւի եւ Արեգակնային համակարգի ինը խոշոր մոլորակները, որոնց անուններով կարող են կոչվել նաեւ տասակի օրերը: Միաժամանակ, տասակի յուրաքանչյուր օր ստանում է համապատասխան մոլորակի ավանդական խորհրդանշանը, որով կարող է կրճատ նշանակվել:

Օրանուններն ու հերթական համարներն ըստ տասակների						Օրվա լուսատուն եւ խորհրդանշանը	
1	Արեգ	11	Երեզկան	21	Գրգուռ	Արեգակ	☉
2	Հրանդ	12	Անի	22	Կորդի	Փայլածու	☽
3	Արամ	13	Պարխար	23	Ծմակ	Լուսաբեր	♀
4	Մարգար	14	Վանատուր	24	Լուսնակ	Երկիր	♁
5	Ահրանք	15	Արամազդ	25	Տրոն	Հրատ	♂
6	Մազդեղ	16	Մանի	26	Նպատ	Լուսնթագ	♄
7	Աստղիկ	17	Ասակ	27	Վահագն	Երեւակ	♃
8	Միհր	18	Մասիս	28	Սեին	Երկին	♆
9	Ձոպաբեր	19	Անահիտ	29	Վարագ	Ծովարք	♁
10	Մուրց	20	Արագած	30	Գիշերավար	Ընդեր	♃

**Թ.** Հանգստյան օրեր կարող են լինել յուրաքանչյուր տասակի վերջին երեք՝ Երկնի, Ծովարքի եւ Ընդերի (այս անունները, ինչպես նաեւ Ընդերի նշանը հեղինակի առաջարկն են) օրերը, ինչպես նաեւ ամբողջ Ամանորը: Այլ հանգստյան օրեր չեն թույլատրվում: Եթե որեւէ տոն ընկնում է աշխատանքային օրվա վրա, այն մնում է աշխատանքային: Այստեղ նույնպես զգացվում է լրացուցիչ ամսվա ընդունված տեղադրության հարմարությունը: Դրա շնորհիվ Նոր տարվա տոնն ընկնում է ոչ աշխատանքային օրերի միջին մասում: Մարդիկ հնարավորություն են ստանում առանց խուճապի նախապատրաստվել տոնին եւ հետո ունենալ հինգ (վեց) օր փոխադարձ շնորհավորանքների եւ հանգստի համար: Եթե բոլոր երեքը հանգստյան օրեր լինեն, դրանց ընդհանուր թիվը (ներառյալ Ամանորը) կկազմի 113 (114) օր, միայն վերջին երկու օրերի դեպքում՝ 77 (78) օր, միայն տասներորդ օրվա դեպքում՝ 41 (42) օր: Գրիգորյան օրացույցով (չհաշված տոները) երկու հանգստյան օրերի դեպքում դրանց ընդհանուր թիվը կազմում է 104 օր, եւ մեկ հանգստյան օրվա դեպքում՝ 52 օր: Տարբերությունն, ինչպես երեւում է, չնչին է, եւ դեռ Նոր տարբերակներ է հնարավոր դարձնում:

**Ճ.** Տոները բաժանվում են երկու խմբի. **բնական-հոգեւոր** եւ **պետական (աշխարհիկ)** տոներ: Տոների ցանկը որոշվում է առանձին: